

# Սյունիաց Երկիր

ՀՈՐԵՔԵԱԲԹԻ, 21 ՀՈՒՆԻՍԻ 2017թ.  
№ 23 (441)

№ 23 (441)

[www.syuniacyerkir.am](http://www.syuniacyerkir.am)



# **62 լրարի առաջ կազմավորվեց Մեղրու սահմանապահ ջոկատը**

Ուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության Հայաստանի Հանրապետության սահմանապահ վարչության Մեղրու սահմանապահ ջոկատը հունիսի 10-ին հանդիսավոր պալմաններում նշեց կազմակորման 62-րդ տարեդարձը:

6

# **Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանին**

Մեծարդու պարոն նախագահ

Հսոստովանեմ՝ ոյուրին գործ չէ, ավելի ճիշտ՝ պատասխանատու քայլ է երկրի առաջնորդին մեր հարթակից նամակ հղելը. մի կողմից ոս նախագահի ծանրաբեռ առօրյայից ժամանակ խլելու հանդգնություն է, մյուս կողմից՝ մեզանում առկա խնդիրներից մեկի վրա Զեր ուշադրությունը հրավիրելու բնական ձևորում:

Ղավատացեք, սյունեցին լավագույնս է տիրապետում լոռության, համբերության, հանդիլության կամ նույնականության արվեստին: Բայց մեր կյանքում, ցավիր, առաջանում-ծագում են խնդիրներ, ստեղծվում են իրավիճակներ, երբ մարդկային այլ դրական և կերպ իմաստագրկվում են եւ համբաւագնության նախագահին դիմելը դարձնում հարկադրական քայլ, կազությունից դուրս գալու միակ երթ:

Խոսք այս դեպքում Սյունիքի մարզում ստեղծված վիճակի մասին է՝ պայմանավոր-

Ված մարզպետ Վահե Հակոբյանի «գործունեությամբ»:

Ազգեղջ լինեմ՝ ի սկզբանե «Սյունյաց երկիր» թերթն ընթանում է ընկալել 2016թ. հոկտեմբերին Սյունիքում կատարված մարդաբանականությունը (ավելի ճիշտ՝ կառավարության լուծելիք հարցն ենք համարել դա) եւ զգութ մեր կարելիության չափով աջակցել կամ Յաւորապետն և ապագան ոժվակնեն օրո-

Վասո Կավիրյանը պայմանա հօվախիս փոթ-  
ծնբացում, մարզի ու Երկրի համար շահե-  
կան հայսածեռություններում (Եթե այդպիսիք  
կլինեն)։ Ասվածը հավաստող բազմարիվ  
հրապարակումներ կամ։ Սկզբնական շրջա-  
նում նույնիսկ աչք ենք փակել Ծովա անհետեր  
քայլերի, գործողությունների վկա՝ մտածելով,  
Ենթարդելով, որ նորանշանակ է, անփորձ է,  
մարզի գործերին եւ իրավիճակին չի տիրա-  
պետում, այսօքյան արժեհամակարգի հետ  
խորություն եւ աններդաշնակություն ունի։  
Մտածել ենք եւ հույս փայփայել, որ, ի վերջո,



Կգիտակցի իր պաշտոնի կարեւորությունը, պատասխանատվության իր չափարաժինը, որ եղանակներ և մեջքառական դրույթներ են առաջ

Երկրաշեն ճանապարհ դուրս կգա, իրադ գլխի  
կիավաքի բոլորին՝ Սյունիքի առջեւ ծառացած  
խնդիրների աստիճանական լուծման գործում:

**Ով շի ճանաշում իր  
հայրենիք, շի կարող  
ճշմարիս սիրել այն...**

# **Մարդունչող միջակություն կամ մի պարզաբանման պատմություն**

Կերպին շաբաթում Յայաստանով մեկ կրկին, մեղմ ասած՝ «ոչ բարով», հիշատակվեց Կապանը: Սահանց խորանուն լինելու պատմության մանրութենքի մեջ, չփորձենով բացահայտել՝ բյուրիմացություն է եղել, մեր քերի նորմատիվային բազայի հետեւա՞նքն է, թե՝ փողի վեճ, փառք Աստծոն՝ փոքրիկի վիճակը լավ է: Անդրադառնանք այս պատմության մեկ այլ հանգամանքի՝ նարզաբետարանի արձագանքին: Սարգաբետարանի պաշտօնական պարզաբանմանը կարող եք ծանոթանալ նարզաբետարանի պաշտօնական կայրեցուն: Պարզաբանում, որը լիովին տեղափոխվում է ժամանակի հրամայականի մեջ՝ «կարող ենք՝ անում ենք, իսկ բացատրություն տալ պարտավոր չենք. մի բան կասենք»:

Պարզաբանման մեջ տեղ գտած հետեւյալ մտքերը միանգամայն հակապետական տպավորություն են ըստում:

1) «Դաշվի անելով այն հանգամանքը, որ իշխանական տեղակիրաված երեխան Արցախի Հանրապետության քաղաքացի է, իսկ ՀՀ քաղաքացիներից բացի այլ քաղաքացիություն ունեցող անձանց համար պետական վերով եւ անվճար հիմունքով քրժկական պասարակումը նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ»: Միգուց 88ր շարժմանը չե՞ն նաև անսակել, պատրազմ չե՞ն տեսել, բայց մի՞թե որդեւ բարեկամ էլ չունեն, որ քացարդեր, թե Հայաստանն այսօր ինչ պայքար է մղում: Իսկ եթե տարրական եզրույթներ երանց հասանելի չեն, ապա հարց է առաջանալ՝ ինչպե՞ս են հասել այդ պաշտոնին: Ինչպե՞ս կարող է հայր քարդառածայն տարանջատել Հայաստանի քաղաքացի հիվանդ հային Արցախի քաղաքացի հիվանդ հայից, այն էլ՝ մանուկը: Կարո՞՞ղ է հաջորդիվ ասեն, որ Հայաստանի Հանրապետությունը կապ չունի Արցախի անկախության համար պայքարի հետ, քանի միջազգային մակարդակով չենք ճանաչել Արցախի անկախությունը: Նախ երկու հայտարարության միջև տարրերություն գտնելու բարդ է: Անհականալի հրավարանական պատկրացումների հետ գործ ունենք: Նորմատիվային խնդիրներ, իհարկե, շատ կան, բայց դա որպես արդարացում բերեն անթույլատրելի փորբողություն է: Պրոֆեսիոնալալության բացակայությունը չափո՞ր է, սակայն մարտնչող միօւնությունն ամենի վերաբարձր է:

2) «Նևատի ունենալով հարցի բարոյական կողմանը՝ ՀՅ Սյունիքի մարզի գարզացման եւ ներդրման հիմնադրամը կփոխառութիւն երեխային Երևան տեղափոխելու համար վճարված ողջ գումարը». հարցի բարոյական կողմն հրո՞ւ հասկանալի է ինեն, թէ՞ կառավարման հերթական թերությունները ծածկելու համար են այսափի ժեսա անում։ Վերջին ավելի հրատեսական է թվում։ Այսուղ մի հարց է հուզում։ մարզպետարանի դեմքը պահելու համար ինչո՞ւ պետք է օգտագործվեն Սյունիքի մարզի գարզացման եւ ներդրման հիմնադրամի ֆինանսները։ Մարդո՞ւ այդ հիմնադրամի նպատակներին չի հակասում այդ փողի նման օգտագործումը։ Մարզպետը, կարծես, աղքատ մարդ չէ, համեմայն դեպս ուղղարիթում է տեղաշարժվում։ Իր դեմքը պահելու հաշիվները թող սեփական ուժերով վճարի, այլ ոչ հանրային նպատակների համար նախատեսված ֆինանսներով։

3) «Կապանի բժշկական կենտրոնից հրաժարվել են օդի խայթողից բունավորված երեխային սեղափոխել երեւան գումար են

Eq 5

Eq 3

## «ՎԵՐԱԾՆՎԱԾ ԹԱԼԻՀ» ԽՈՒՉԱՐՃԱՆԻ ԲԱցումը



Արցախի Հանրապետության  
նախագահի Բակո Սահակյանը հու-  
նիսի 17-ին այցելել է Մարտակեր-  
տի շրջանի Թալիշ գյուղ եւ Ներկա  
գտնվել այնտեղ «Կերածնված Թա-  
լիշ» հուշարձանի բացման համով-

### սավոր արարողությանը:

Նախագահը Երախտագիտություն է հայտնել Նախաձեռնության հեղինակներին՝ Զելիկ, որ հուշաքամն ունի յուրահասությ խորհուրդ



կամուրքուն ու նպատակալացու-  
թյունն այս բնակվայրի երբեմնի  
փառքը վերականգնելու, այն կրկին  
մարդաշատ եւ ծաղկուն դարձնելու  
գործուն:

[artsakhtimes.am](http://artsakhtimes.am)

**ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ. «Տա Ասդված՝  
ինչքան զինակոչիկ ճանապարհենք,  
այնքան էլ ընդունենք»**



ՀՀ Նախագահը մայիսի 15-ին  
հրամանագիր է ստորագրել  
2017թ. ամառային զորակոչ  
անցկացնելու եւ գորացրում  
կափարելու մասին, ինչի կազ-  
մակերպական աշխատանքնե-  
րի համար պարագանակու-  
թն զինումիսարիաբներո:

«Ամառային զորակոչչի անցկացման և ախտապարասպական աշխատանքներին արդեն սկսվել են, նրանք, ովքեր պիտանի են ծառայության, ընդգրկվել են ցուցակներում, ովքեր թեկուզ աննշան առողջական խնդիրներ ունեն, ուղարկվել են հետազոտման՝ բժշկական հետազոտության համապարասխան որոշումներ ստանալուց հետո կիսարկեցվեն հետագա անելիքները». - Նշեց Գորիսի գինում, գնդապետ ՄԵԼԻՔՍՅԵՐ Պողոսյանը:

Հովհանի 1-ից կսկսվի ՀՅ արական սերի այն քաղաքացիների պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայությունների 2017թ. ամառային զորակոչք, որոնց 18 տարին լրանում է մինչեւ 2017թ. հունիսի 30-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց նախկինում տրված՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչք տարկետման իրավունքը դադարել է մինչեւ 2017թ. հունիսի 30-ը ներառյալ։ Զինկոնցից տեղեկացանք նաև այլընտրանքային աշխատանքային ծառայության մեկնողների մասին։ «2007թ.-ից առ այսօր Գորիսի զինկոնց եմ, մեր տարածաշրջանում

ինուսափումը, պատաճների մեջ ինչ-որ առումով վախի գգացում առաջանար եւ այլն: Բայց, ինչպես փաստեց Սելիխսեր Պողոսյանը, բարեխախտաբար Գորիսի տարածաշրջանում մեր պատկերացրածի հակառակ իրավիճակն է ստեղծվել: Պատաճներն ավելի զիտացարար են մեկնում ծառայության, հպարտությամբ կատարում իրենց առջեւ դրված խնդիրները: «Նոյնինչիկ ծառայության ոչ պիտանի մի երիտասարդ, նրա ծնողը դիմել էր պաշտպանության նախարարին, որ թույլ տան ծառայել, բայց, իհարկե, մերժվել էր: Վերջերս մեր ժամկետային զինծառայողների ծնողների հետ միասին Արցախի հյուսիսային հատված տեսակցության ենք մեկնել. Եւ հրամանատարների, եւ տղաների հետ հանդիպումներից հասկացանք, որ մեր էրեխները «դոլիսները տեղը» ծառայում են: Ապրիլյան պատրազմն էլ ցույց տվեց, որ ի վիճակի ենք պաշտպանել մեր հայրենիքը՝ թե բանակի գործողությունները, թե կամավորական շարժումը հաշվի առնելով», - նշեց զինկոնը եւ հավելեց, որ այս պահին բանակից խուսափողներ չկան: Դիմականում խնդիր է առաջանում նրանց հետ, ովքեր գտնվում են արտասահմանում եւ հաշվառման ժամանակ ՀՀ-ում չեն հեղեղ, բայց այդ հարցոն օրենքի սահմաններում կարգավորվում է:

“Այսականագրային զինօառայող-  
ներից ի ստելիս զնմապետը նշեց, որ  
հանալորում են առաջին բանակային  
կորպուսը, եւ այս պահին թափուր  
տեղ չկա: Գաղտնիքը չէ նաև, որ  
պայմանագրային զինօառայության  
անցնող անձանց մի մասի համար  
դա գուտ աշխատանք է, իսկ նյուս  
մասի համար՝ մասնագիտություն,  
կյանքը բանակի հետ կապելու ցան-  
կություն:

# Նոր քանդակներ՝ Կապանում

**2016թ. հոկտեմբերին «Քաղաքի օրվա» միջոցառումների շրջանակում մէկնարկեց «Առաջին քանդակագործության սիմպոզիում Կապան-2016» նախաձեռնությունը, ինչի շնորհիվ քաղաքը վերքերս համալրվեց նոր քանդակներով:**

գեւելու պատրաստակամություն հայտնեցին: Իր տեսակով առաջին անգամ կազմակերպված սիմպոզիումը հնարավոր է ունենա շարունակություն, ինչին կարող են միանալ ոչ միայն տեղացի քանդակագործները, այլև այլ տարածաշրջաններից: Ի դեպ, աշխատանքների իրականացնան ընթացքում իրենց խորհուրդներով երիտասարդներին աջակցել են ավագ սերնդի կապան-

ցի արվեստագետները:  
Տարաբնույթ թեմատիկայով  
եւ ոճով կերտված յոթ քանդակը  
գելարվեստական խորհրդի եւ քան-  
դակագործների համատեղ քննար-  
կումից հետո իրենց հանգրվանը  
գտան քաղաքի տարբեր վայրե-  
րում: Ապրիլյան քարոյրայում զոհ-  
ված կապանցիների հիշատակին  
Նվիրված խաչքարը (հեղ.՝ Ալեքսան-  
Դրաբեյյան) տեղադրվել է Սուլը



Մեսրոպ Մաշտոց Եկեղեցու բակում,  
«Արծիվը» (հեռ.)՝ Կարեն Սաղարե-  
յան՝ իրեն ուժի եւ հզորության  
խորհրդակի՞՝ նորակառուց «Յի-  
շատակի այգում», «Մարդ էլ կա,  
մարդ էլ» (հեռ.)՝ Եղան Ստեփա-  
նյան), «Յայկական» (հեռ.)՝ Գարիկ  
Մկրտչյան), «Մայորություն» (հեռ.)՝  
Ռաֆայել Առաքելյան) քանդակները՝  
քաղաքի կենտրոնական (Կ.Դեմիր-  
ջյան հրապարակին կից) այգիներից  
մեկում, «Մաշան եւ արջօ» (հեռ.)՝  
Արթուր Սաղարեյյան՝ Բաղադրեղ  
քաղամասի հանգստյան գոտում,  
«Մեսրոպ Մաշտոց» (հեռ.)՝ Արման  
Ասատրյան՝ Կապանի թիվ 13 հիմ-  
նական դպրոցի բակում: Նշենք, որ  
ճախաձեռնությանը դրական արձա-  
գանքի է արժանացրել նաև հասա-  
ռակություն:

Ի դեպք, ինչպես տեղեկանում ենք քաղաքապետարանի պաշտոնական կայքէջից, Կապանի Ռաֆայել Մինասյան փողոցի N 13 եւ N 14 շենքերին հարող տարածքի նորակառուց «Հիշատակի այգին» նվիրվել է ապրիլսան քառօրյա պատերազմում զոհված կապանցիների հիշատակին: Նախաձեռնությունն իրականություն է դարձել Կապանի քաղաքապետարանի եւ քաղաքում գործող տնտեսվարողությի ներդրումների շնորհիկ: Այսու շնարարության համար գումար են հատկացրել «ԶԻԵՍ-ՄԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն (Ուստիեւնը).

«Զանգեզուրի պղնձամոլիբդինային կոմբինատ» ՓԲԸ-ն, շինաշխատանքներն իրականացվել են Կապամի կրնունալ ծառայության, «Ստեգո» եւ «Մ-ՄԿԱՍ» ՍՊԸ-ների ուժերով:

# Մարդունչող միջակություն կամ մի պարզաբանման պակամություն

Եջ 1 պահանջելք՝ վերտառությամբ իրապարակման մեջ ներկայացված տվյալները չեն համապատասխանում իրականությամբ:

- Միջազգային խնդիրներից ելնելով՝ Հայաստանի Հանրապետությունը չի ճանաչում Արցախը, բայց արդյո՞ք ՀՀ-ի ու Արցախի հարաբերությունները անող են:

Առաջնացնել, օրինակ, ՀՅ-Վրաստան հարաբերությունների հետ։ Վրոյնը՝ հնարավոր չէ ինչ-որ ձեւով կարգավորել հարաբերությունները՝ առնվազն որոշակի ներքին հրամանների մակարդակով,

- Կապանից Երևան շտագօգության մերենայով տեղափոխման 160,000 դրամի պարնանկառուցվածքը պարզ չէ: Ծովայական հարաբերություններու են տիրում, այստեղ էլ մոնուպոլիայի հետ գործ ունենք, տղերքը որոշել են փո՞ղ աշխատել: Մարզական ձախողված ընտրություններից ի վեր խոսում է հիմնարիններից ու օդանավակայանի վերաբացումից, բայց թժշկական ավտոմերենայի հարցը նրա ուժերից վե՞ր է: Կարծ ասած, արդյո՞ք միայն խոսելու է նրա մոտ լավ ստացվում, եւ առջանի է “Բառու” մասնակիւթանը:
  - Քարձրացնող դեպքերն են ուշադրության արժանանում ու ֆինանսավորում: Որեւէ փորձ կարվի՞ այնպես կազմակերպելու գործընթացները, որ այսպիսի խնդիրներ չառաջանան հետայսուու:
  - Վաստորեն, 2016 թվականին դեկտեմբերի 15-ից Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման հիմնարդար գործույուն ունի: Կու ի՞նչ միջոցներից է այդ հիմնարդար սննդում, եւ արդյո՞ք կունենա նարգաշինական նշանակություն: Թե՞ այն մարզպետին «գրպանի» հիմնարդարն է՝ նաև նատիվ պատմությունների ծախսերը փոխհատուցելու համար: Յանձնեան որպէս անորու է իհասարակության առաջնային գործույունը:

Ար, թէ՞ մենք ականատես կլինենք  
որեւէ կառուցողական գործողու-  
թյան:

արձանագրենք՝ Երևանյան բար-  
քերը Սյունիք էլ հասան. սպա-  
սենք հաշվետվություններին:

Սեփիա հոլիդայսին ամբիցիաներ ու ունեցող նարզաբետի ու նրա աշխատակիցների համար արդյո՞ք բարդ է հետեւել իրեն վստահված մարզի համբավին ԶԼՄ-ներում այնպես, ինչպես իրենց անձին վերաբերող նյութերն են վերահսկում։ Այժմ Սյունիքին հասցիղ վնասները բանականությունից վեր են եւ կարող են անուղղելի հետեւանքներ ունենալ։

# **«Ասդոկ Սյունին» հասդարակամ է իր բռնած գործի հանդեպ**

Եղօճանկահիշատակ Որեքուն  
Եջանանցին կնքեց այդ կազմա-  
կերպության անունը՝ «Անդրկա-  
Սյունի», որ ի սկզբանե նապատակ  
ուներ համախմբել Քաջարանի  
երիտասարդներին, նրանց միավո-  
րել մի գաղափարի շուրջ, կազմա-  
կերպել պատամիների եւ առջևկ-  
ների ազատ ժամանակն առավել  
հետաքրքրական դարձնող միջո-  
ցառումներ: Չորս տարի է, ինչ գոր-  
ծում է «Անդրկա Սյունին» (հիմնադիր  
նախագահ՝ Արտակ Աբրահամյան):  
Մեր թերթն այդ կազմակերպությանն  
անդրադարձել էր «Անդրկա Սյունին  
միավորում է ուսանողությանը» հրա-  
պարակմանը՝ («Սյունյաց երկիր»,  
31 հոկտեմբերի 2015թ.), նշել նրա  
կողմից անցկացվող միջոցառումնե-  
րի մասին: «Անդրկա Սյունու» վերջին  
մեկ տարում հիշատակելի ծեռնարկ-  
ներից է այն, որ սնունդ եւ հագուստ  
են հասցել սահմանին կանգնած  
զինվորին՝ անցած տարվա ապրի-  
լյան լարված օրերի ընթացքում: Այս  
անգամ գրելով կազմակերպության  
մասին՝ որոշեցինք տպագրել այն  
մարդկանց կարծիքները եւ գնա-  
հատականները, ովքեր մոտիկից  
առնչվել, կազմակերպության հետ  
ճանապարհ են անցել:

Արդակ Աբրահամյան



զղիված ազատամարտիկների ոգե-  
կոչմանը նվիրված ցերեկույթներ  
կամ բնապահպանական միջոցա-  
ռումներ: Երիտասարդին ուղղորդում  
են դեպի իր արմատները, դա արդեն  
մեծ գործ է, քանզի այդ արմատնե-  
րով ջրվելու, սնվելու, հաստարուն  
ծառ է դառնալու եւ նրան շարժել  
արդեն ոչ ոք չի կարող:

«Անդոկ Սյունին» քրիստոնեական դաստիարակության վերաբերյալ ունի հստակ վերաբերմունք: Սա պատճառականորեն չեն ասում, որովհետեւ զանազան աղանդերի գործունեությունը միտված է ոչ թե երիտասարդությանը մերձեցնել Աստծուն, այլ զոնդիացնել, վերահսկել նրա բանականությունը, ի վերջո, խարիսկել մեր պետականության իմբերը: Մեր ժողովուրդը դարենար աճուր է եղել իր հավատքի, իր միասնության մեջ: Սակայն նաև աղանդերը, մասնավիրապես «Եհովայի վկաները», նպատակ ունեն երիտասարդությանը կտրել ազգային արմատներից, խարարել նրա համերաշխությունը: Իսկ «Անդոկ Սյունին» ջանում է երիտասարդությանը հեռու պահել այդ ամենից, նրա մեջ սերմաննել համարդկային արժեքներ:

## **Սարին և Նարինյան (Քաջարանի արիեալագործական ուսումնարանի ուսուցիչ)**

Մարդիկ, ովքեր չեն աշխատել  
մատադ սերնդի հետ, երբեք չեն կա-

A black and white photograph of a large group of approximately 30-40 people, mostly young adults, posing for a group photo. They are standing in two rows on a paved surface. The group is diverse in age and attire, with many wearing casual clothing like t-shirts, jeans, and caps. Behind them is a tall, rectangular stone monument with intricate carvings and a central arched opening. The setting is outdoors, with a backdrop of hills, trees, and some modern infrastructure like power poles and lines.

կողմից իրականացվող գրեթե բոլոր  
միջոցառումներին, եւ ամենքս իր լու-  
ման է փորձում ներդնել այն հաճելի  
միջավայրի ստեղծման գործում,  
որ ստեղծվել է մեծ նվիրումի շնոր-  
հիվ։ Պարոն Արքահամյանը գիտի  
ինչպես կազմակերպել այն ամենը՝  
որ նպաստում է մտահղացումներն  
իրականություն դառնալուն։ Փոքր-  
ինչ չեմ կասկածում, որ «Անդոկ Սյու-  
նին»՝ ի դեմ նրա նախագահ Արտակ  
Աբրահամյանի, առաջիկայում եւս  
հանդես կգա ուշագրավ նախաձեռ-

**Գարիկ Ղալեզյան («Ասդով  
Սյունի» կազմակերպության  
միությանախառահ)**

Երկար ուղի չի անցել «Անդրկա Սյունին», բայց հիշատակելի գործերով է հանդես եկել: Պատահների հետ շատ պահեր ենք ապրել, լավ ու վաստ օրեր, պատահել է՝ փորձերի ժամանակ բենի վրա երեխաները քնել են, ելի ու ելի անոռախանակի օրեր:

Նպատակը մեկն է եղել՝ համախմբությունը քաջարանի երիտասարդներին։ Ոչ մի շահ չի հետապնդում կազմակերպությունը, այդ բվլում՝ քաղաքական։ Սեր քանած ուղղությունը մեկն էր՝ ունենալ առօղջ, լուսավոր երիտասարդություն, լինել ոչ թե հինգ մատ, այլ մի բռնճը։ Ամբողջ նպատակը ու առ էր, ջանում ենք եղածին մի բան ավելացնել։ Աշխատում եմ լեռնահանքային արդյունաբերությունում, բայց փորձում են լարված առօյյայից կտրվել մի ժամ, անցկացնել երիտասարդների հետ, ինչ-որ չափով նրանց օգտակար լինել։ Փառք Աստծո, ստացվում է։

Պիտի ասեմ, որ կազմակերպության անդամների մեջ ամուլ է իրենց բռնած գործի հանդեպ հավատոց: Դա շատ են կարեւորում: Յաճէլի է տեսնել, որ Յայ առաքելական եկեղեցու հետեւորդներ են, դավանում են

համանարդկային արժեքները: Ուշագրավ է, որ կազմակերպության անդամները եղել են Դայաստանի եւ Արցախի տեսարժան, պատմական վայրերում, ծանրոթացել հայ ժողովունի պատմամշակութային արժեքներին, օրինակ, եղել Գանձասարի վաճրում, զրոյցել հոգեսր հովվի հետ, տեղեկություններ ստացել հավատի այդ տաճարի մասին, ստացել իրենց հուզող հարցերի պատասխանները:

Ինչպատճեն նշում է ՀԿ-ի նախագահ Արտակ Աբրահամյանը՝ կազմակերպության գործունեությունն աշխուժանում է ամռան ամիսներին: Քանզի «Անդրկ Սյունու» անդամների զգալի մասը հանրապետության բուհերում սովորող ուսանողներն են եւ ամառային արձակուրդ անցկացնում են հայենի քաղաքում: Ծովագիր ունեն այցելելու հայ եկեղեցական ճարտարապետության Արցախի դպրոցի ամենախոշոր եւ լավագույն համալիրներից մեկը՝ Դադիվանքը:

**ՔՐԻՍՏՈՆԵՈՂՈՄԱՆՅԱՆ  
«Ամենամեծ ձեռքբերումս  
Կապանի թիվ 1  
Նախակրթարանի  
Երբեմնի բարի համբավի,  
ավանդույթների  
Վերականգնումն է»**

«Եթե աշխարհի բոլոր մարդունեկանի մասնապարտեզ հաճախեին, երկրագնդի վրա քարությունն ու ազնվությունն ավելի կերպաշռեին», – այսպես բնութափեց մանկապարտեզի դերը Կապանի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրին Քրիստինն Սողոմոնյանը, ով 2009 թվականից է ստանձնել իր պաշտոնը՝ մինչ այդ աշխատելով տվյալ հաստատությունում հոգեբան, այնուհետև՝ տնօրենի տեղական ուսումնական օջով:

1972թ. մայիսի 2-ին բացված մանկապարտեզն այս տարի տոնում է իր գործունեության 45-ամյակը: Գրեթե կես դար մատուց սերնդի դաստիարակությամբ եւ կրթությամբ զբաղվող նախադպրոցական ուսումնական հաստատությունը տարիների ընթացքում ծեւավլուել է ավանդույթներ, կերտել պատմություն, ունեցել վայրէջքներ եւ վերելքներ: Ի սկզբան վեց խմբի եւ միջինը 140 երեխայի համար նախատեսված մանկապարտեզզ մինչեւ անկախության տարիները պահպանել է կարգը, սակայն պատերազմական եւ հետպատերազմյան որոշ ժամանակաշրջանում ծննդիության, հաճախելիության նվազմամբ պայմանավորված՝ մեկ խումբ փակվել է: Այժմ Կապանի թիվ 1 ՆՊՀ-ում գործում է վեց խումբ, ուր հաճախում է ընդհանուր թվով 165 երեխա: «Տարածքը փոքր է, եւ հնարավորություն չունենք յուրաքանչյուր երեխայի համար մեկ մահճակալ տեղադրել: Այդ իսկ պատճառով, երեխաների թվի ավելացմամբ պայմանավորված, ստիպված ծեռք ենք բերել երկարականի եւ եռահարկ մահճակալներ, ինչի շնորհիկ նոյն մակերեսին քննեցնում ենք ոչ թե մեկ, այլ երկու կամ երեք երեխա», – պարզաբանեց տնօրենը եւ հավելեց, որ խնբերում հիմնականում 25-30 երեխա կա: Դիտարկմանը, որ երեմն այդ թիվը հասնում է մինչև 33-35, տնօրենը պատասխանեց, որ ժամանակին եղել են նաև դպրոցական դպրեր, բայց երեկայում կրթության պետական տեսչությունն ուշադրություն է դարձնում այդ հարցին, եւ 30-ը չեն գերազանցում:

Քրիստոնեական Սոլոմոնյանի խոսքով՝ իրենց մանկապարտեզ դիմողների թիվը շատ է, մայիսի 11-ի դրությամբ արդեն կրտսեր 1-ին խումբ հաճախելու համար 35 դիմում կար, չնայած խումբը նախատեսված է 20 երեխայի համար: «Եվս մեկ խումբ բացելու համար համապատասխան տարածք չունենք եւ ընդունելությունը կազմակերպենք հնարավո-

րության սահմաններում: Զնայած պետք է խոստովանեն, որ դաստիարակներն ամենաշատը դժգոհում են երեխաների թվաքանակից: Աղիասարակ համակարգի խնդիրներից մեկն էլ Վարձատորությունն է, երբ սաների թվով պայմանավորված համապատասխան տարրեհակում չկա», – Ծեց տնօրինը՝ հավելելով, որ Եթե տվյալ երեխային ժամանակին կրուսեր կամ միջին խումբ, թվաքանակի սահմանափակմանը պայմանավորված, չեն կարողացել ընդունել, ապա զո՞նե ավագ խումբ հաճախելուն անպայման ընդառաջում են՝ հաշվի առնելով ներկայիս կրթական համակարգի պահանջները:

Երեխանների տարիքային հենքի վրա ձեւավորված խմբերում, թվուն է, առօրյան նույնն է՝ առավոտյան մարզանք, նախաճաշ, պարապ-նունք, գրոսանք, ճաշ, քուն, հետճաշ, խաղ-զվարճալիք եւ այլն, բայց անեն օր մանկապարտեզի սաները տուն են գնում նոր գիտելիքով, հնուու-թյանք հարստացած: «Խորիրդային տարիների պահանջներն այլեւս չեն համապատասխանում մեր նոր կրթական համակարգին: Կառուց-վածքային փոփոխություններին համապատասխան կազմված ծրագ-րային պահանջները կատարելու համար վերջին տարիներին թողարկ-վել են ուսումնական ձեռնարկներ, որոնք բավականաշափ հեշտացրել են դաստիարակի աշխատանքը: Ու-սումնական գործընթացը լիարժեք կազմակերպելու, դաստիարակից որակյալ աշխատանք պահանջելու համար նախեւառաջ պարտավոր ենք նրան բավարարել համապա-տասխան միջոցներով: Մի պահ այդ առունով բավականին խողով վի-ճակ էր տիրում. եղածն արդեն փշա-ցել էր կամ չէր համապատասխանում պահանջներին: Բարեբախտութար, այս ժամանակահատվածում բյու-թեռվ, որոյ դեպքերում նաեւ սեփա-կան միջոցներով կարողացել ենք ձեռք բերել զարգացնող միջավայրի առարկաներ, պաստաներ, դիդակ-տիկ պարագաներ, ուսումնաօժան-դակ գործեր, ձեռնարկներ եւ այլն: Ի հարկե, ուսումնական ձեռնարկնե-րում մանրամասն ներկայացվում է պարապմունքի անցկացման ընթաց-քը, բայց դա բնավ չի նշանակում, որ դաստիարակը ստեղծագործա-կան մոտեցում չպետք է ցուցաբերի պարապմունքի ընթացքում՝ հաշվի արնելով երեխանների կարողությունները: Ի վերջ, պարապմունքի տերը նա է»: – Նշեց տնօունու:

Վերջենս ՆՈՒՐԻ ի բոլոր խմբերում գրածանաչությունից, նկարչությունից, էկոլոգիայից, խոսքի զարգացումից, կառուցղղականից, Ֆիզկուլտուրայից անցկացված բաց պարապմունքների դերը շատ կարևորեց տնօրինը, քանի որ դրանք, բացի նրանից, որ երեխաների գիտելիքներն են վեր հանում, նաև նպաստում են դաստիարակների փորձի

ավելացնանք, ինչ-որ առումնով նաեւ մեծ լարանի առաջ առավել անկաշ-կանց ելույթ ունենալու հնտության ձեւավորմանը: «Տարվա ընթացքում ես եւ ուստմնական գծով տեղա-կալս հաճախակի ենք ուստմնա-դաստիարակչական աշխատանք-ների վերահսկման նպատակով դասավորմանը իրականացնում, ուղղություն ցույց տալիս դաստիա-րակներին, ուստմնասիրում նրանց աշխատանքի առավելություններն ու թերությունները, անհատական աշխատանքների միջոցով լրաց-նում բացերո: Նախկինում այդ բաց պարապմունքներն անց էր կացնում տվյալ խնդիր միայն մեկ դաստիա-րակը, բայց վերջին երեք տարվա ընթացքում սկզբունքը փոխվեցինք. տվյալ խնդիր երկու դաստիարակն էլ անց են կացնում բաց պարապմունք՝ ապահովելով մեթոդիկաների բազ-մազանությունը, աշխատանքի հա-վասարացափ բաշխումը: Դրանով խոսսափում ենք նաեւ մեկ դաստիա-րակի առավել ակտիվ կամ մյուսի պասիվ դիրքում հայտնվելուց», – պարզաբանեց Ք.Սողոնյանը:

Յատկապնդ վերջին մեկ տարում  
տարբեր հաստատություններում,  
կազմակերպություններում անց են  
կացվում տարաբնույթ ստուգում-  
ներ, ինչից անմասն չեն մնացել  
նաև նախադպրոցական ուսումնա-  
կան հաստատությունները: Ք.Սո-  
ողոննանի տեղեկացման՝ 2016թ.  
ապրիլ-մայիս ամիսներին ԿԳՆ  
կրթության պետական տեսչության

սի բացրողումներ են արձանագրվել հաստատությունում, տնօրենը պատասխանեց. «Գրեթե բոլոր մանկապարտեզներում արձանագրված բացրողումներից է առանձին ֆիզկուլտուրահանգչի եւ պարուսոյի հաստիք չունենալը: Բանն այն է, որ օրինակելի հաստիքացուցակով պետք է ունենանք այդ հաստիքները, բայց հանայնքային բյուժեի սղության պատճառով հնարավոր չէ այդ հարցը լուծել: Բացրողումներից մեկն էլ վերաբերում էր հաստատությունում աշխատող կադրերից երկուսի՝ ոչ մասնագիտական կրթություն եւ ստաժ ունենայուն, – նշեց տնօրենը, – եթե աշխատանքի ընդունման համար դիմոր անձն ունի նախադպրոցական մասնագիտական կրթություն, աշխատանքային փորձը պարտադիր չէ, բայց եթե չունի մասնագիտական կրթություն, ապա պետք է ունենա գոնե մանկավարժական կրթություն եւ առնվազն վերջին երկու տարում մանկավարժական փորձ: Նախկինում հինգ տարվա մանկավարժական փորձ էր պահանջվում, բայց, հաշվի առնելով կադրերի պակասը, պահանջները մեղմացրել են»:

Յաստառությունն ունի 31  
աշխատակից, ի հիմնականում հա-  
մալրված է երիտասարդ կաղորեսով։  
Տնօրենը նշեց, որ այս տարի հրա-  
ժեշտ կտան 42-43 տարվա աշխա-  
տանքային փորձ ունեցող երկու  
դաստիարակի։ Իհարկե, ցավով է  
ասում այդ մասին, քանի որ նրանց



մասնագետները լուրջ ուսումնասիրություն իրականացրին Կապանի թիվ 1 ՆՈՒՆ-ում փաստաթղթաշրջանառության, ուսումնական պարապմունքների ուսումնասիրության, մեթոդ-կարիքնետի հագեցվածության, տարածքի՝ պահանջներին համապատասխանության, իսկ հումքին՝ հաստատության լիցենզավորման վերաբերյալ: «Իհարկե, 100 սովորությ չենք համապատասխանում լիցենզավորման պահանջներին, բայց մեր մանկապարտեզում այնքան դրական կետեր կային, որ ստացանք համապատասխան լիցենզիա», – նշեց տնօրինը՝ ներկայացնելով նախատեսված չափանիշները, այն է՝ առանձին խաղատենյակի, նոշասենյակի, մարզադաշինի, լուրա-

սահմագի, սպազմալույս, ուղարձանչութեան բանցուր երեխանի համար 5-6 քառ. մետր տարածքի առկայություն եւ այլն: Կապաճի քաղաքապետարանն առավել հաճախակի է անցկացնում տարբեր ստուգումներ ֆինանսական, ուսումնական եւ մի շարք այլ հարցերի շուրջ:

Հարցին,թե Կրթության պետական տեսչության ստուգումների արդյունքում իմբնականում ինչպի-

Այշներից մեկն էլ աշխատավարձի չափն է (կարծում ենք՝ բոլորին է հայտնի, թե մանկապարտեզում որքան աշխատավարձ են ստանում, մանավանդ ոչ լրիկ դրույքաչափով աշխատելու պայմաններում): Կապանի պահանու 2009թ. դեկտեմբերի 29-ի թիվ 93-Ա որոշմանը՝ դաստիարակների աշխատավարձի չափը որոշվում է ըստ առաջին, երկրորդ, եղողորդ կարգի:

Կապանի թիվ 1 ՆՈՒՅԻ-ի հիմնական խնդիրը եղել եւ մնում է որոշ խմբասենյակների եւ սանհանգույցների, դաշիճիք, աշխատասենյակների, լվացքատան նորոգումը, ինչպես նաև բակում վատ ջրահեռացման հետեւանքով՝ անձեւացրելից «լճակ» է առաջանում, ինչն էլ փչացնում է խոտածածկը, քայլայում առանց այդ էլ ոչ բարվող վիճակում գտնվող ասֆալտը: Իսկ ուսումնական գործընթացում, բնականաբար, ամենօրյա ընթացիկ հարցեր են առաջանում, որոնք հեշտ հալրահարելի են: 2009 թվականից առ այսօր Կապանի քաղաքապետարանի եւ նախկին «Դին զոլոր մայնինգ»-ի միջոցներով կարողացել են վերանորոգել երեք խմբասենյակ աճբողջովին եւ խոհանոց՝ սննդի բլոկի հետ միասին: Մանկապարտեզօք հռվանավորներ չունի, բյուջեով, այլ միջոցներով, առանձին ծնողների օգնությամբ նվիրատվության կարգով երթեան որոշակի գույք են ծեռը բերում:

Մանկապարտեզի սաների հետ  
աշխատող շրջիկ հոգեբանն ու լո-  
գոպեդը նշում են, որ այս տարիքի  
երեխաների շրջանում առավել տա-  
րրածված են շփման, վարքի որոշակի  
խանգարման, հնչարտաբերական  
եւ խոսքի զարգացման խնդիրնե-  
րը: «Ընդունելիս բնակ հաշվի չեմ  
առնում երեխայի ընտանիքի սոցիա-  
լական վիճակը, նրա՝ առողջական,  
հոգեբանական, լեզվական ինչ-ինչ  
խնդիրներ ունենալը. ինձ համար բո-  
լորն էլ հավասար են: Դատկապես  
հաշվի առնելով հանրապետությու-  
նում ներդրված ներառական կրու-  
թյան համակարգը՝ կարծում եմ՝ յու-  
րաքանչյուր ՆՈՒՅ պետք է ունենա իր  
առանձին լոգոպեդն ու հոգեբանը»,  
— նշեց տնօրինը:

Սիհայն այս կրթօջախում 43 տարավա աշխատանքքային գործունեություն ծավալած դաստիարակչութիւն Լարիսա Մարտիրոսյանը սերունագեղերի միջեւ տարբերության մասին խստելիս նշեց, որ բոլոր ժամանակներում էլ երեխաներու ունենում են իրենց եւ լավ, եւ վատ կողմերը, պարզապես պետք է շատ սիրեն նրանց, նվիրվեն նրանց դաստիարակության չափազանց պատասխանառու աշխատանքին: Նրա խսորք՝ այսօրվա սերունդը, կարծեք, Ֆիգիկապես ավելի բոյլ է, ինչն ազդում է նախեւառաջ նրանց առողջական վիճակի վրա: «Ըստ առաջինում թիւ երեխա ունենալը նոյնպես ինչ-որ առունով ազդում է երեխայի դաստիարակության մակարդակի կազմակերպվածության վրա: Երեխան, որ ընտանիքում միայնակ է մեծանում, մանկապարտեզում նոյնպես ցանկանում է լիդերի դեր ստանձնել, երեխն կանակություններ դրսեւողի: Բայց դրանք եւ նմանատիպ հարցերն ընթացքում լուծվում են ծնողների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ: Ինչ վերաբերում է ծնող-մանկապարտեղ համագործակցությանը, ապա այս տեղ այնպիսի աշխատելառ ենք սահմանել, որ թե՛ ծնողը գործ լինի, թե՛ դաստիարակը», – նշեց Գործառու դաստիարակը: Այս տարիների ընթացքում նա երբեւ չի փոշնանել ընտրած մասնագիտության համար, քանի որ մեծ սիրով է կատարել իր աշխատանքը, ինչը խոր-

հուրդ է տալիս նաև երիտասարդ կաղըերին: Մանկապարտեզը եղել է իր համար հարազան



# 62 լրարի առաջ կազմավորվեց Մեղրու սահմանապահ ջոկատը

Մեղրու սահմանա-  
պահներին շնորհա-  
վորելու էն Եկել Հայաստանում  
ռուս-հայկական զորքերի միա-  
ցյալ խմբավորման հրամանաւոր,  
գեներալ-մայոր Անդրանիկ Սակա-  
ռյանը, Հայաստանի Հանրապետու-  
թյունում Ռուսաստանի Դաշնության  
անվտանգության դաշնային ծառա-  
յության սահմանապահ Վարչության  
պետի առաջին տեղակալ, գնդա-  
պետ Ալեքսանդր Վախնինը. Գյուլ-  
որդ է Արմավիրի սահմանապահ



ջոկատների հրամանատարները, սահմանապահ զորքերի վետերաններ, Մեղուու միացյալ համայնքի դեկավար Միխթար Զաքարյանը, այլ հրավիրված անձինք:

Տնակատարությունը մեկնարկեց սահմանապահ ջոկատի շարային հրապարակում: Հնչեցին Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության օրիներգերը, որից հետո քայլերգերի մեղեդիների ներքո հրապարակ բերվեցին երկու պետությունների եւ Մեղրու սահմանապահ ջոկատի դրոշները: Սահմանապահ Վարչության անունից ներկաներին բարեմաղթանքի խոսքեր հետեւ գնդապես Աներազոր Վահանին:

Ալեքսանդր Վախինից:

Մեղրու սահմանապահ ջոկատի հրամանատար, գնդապետ Ալեքսանդր Բուրշտինն իր ելույթում անդրադարձավ Մեղրու սահմանապահ ջոկատի հիմնադրման պատմությանը: Այն սկսվում է 1926 թվականի մարտի 31-ից, երբ Մեղրու գավառի պետական սահմանը պահպանելու համար Նախիջևանի եւ Զարքարիլ ստորաբաժնում ներից ճեւավորվեց սահմանապահ զորանաս, որն անվանվեց Մեղրու առանձին սահմանապահ պարետատուն: Ծանր ու դժվարին էն սկզբնական շրջանում սահմանապահների կյանքի ու ծառայության պայմանները, բայց հաղթահարելով դժվարությունները, սահմանապահները պայքարում էն խորհրդային պետության թշնամիների դեմ՝ հիմք դնելով մարտական ավանդույթների: 1931 թվականին գինված քանոյայի դեմ մղված պայքարում սահմանապահները կարողացան հետ մղել ու չեղորացնել ավազակախումբը, բայց նրանցից չորսը՝ ուղեկալի պետ Ռեզնիկովը, սահմանապահներ Տարանտինը, Զայցելը, Եսկովը, հասուցեցին սեփական կյանքով: Նրանց շիրմներն ամփոփված են սահմանապահ ջոկատի տարածքում: Դայրենական մեծ պատերազմի տարիներին Մեղրու պարետատան

իրամանատար, գնդապետ Սերգեյ Վլասովը: Բարենադրանքի խոսի հետ մէկտեղ տերունական աղոթք հնչեցրեց Սեղոր տարածաշրջանի հոգենոր հովիկ տեր Ռաֆայել քահանա Խաչիկյան:

Հանդիսավոր հանրահավաքից հետո տոնակատարության մասնակիցները ծաղիկներ դրեցին պետական սահմանը պահպանելիս զոհված սահմանապահների հիշատակը հավերժանող հուշարձանի պատվանդանին:

— Յուրաքանչյուր զորամասի  
կազմավորման օրը նրա ծննդյան

օրն է համարվում, – հանրահա-  
վաքից հետո «Այսլիաց Երկրին»  
օրվա խորհրդի առնչությամբ իր  
տպավորությունները ներկայացրեց  
գեներալ-մայոր Անդրանիկ Մակա-  
րյանը, – առաջին հրամանատարից,  
ուղեկալների պետքով, սոորարա-  
ժանումների հրամանատարներով։  
Տեսեր 62 տարում քանի սերունդ է  
փոխվել։ Սերունդների հերթափոխն  
ինքնին մի մեծ պատմություն է,  
միայն մի տարվա ընթացքում Երկու  
զորակոչ է լինում, չհաշված, թե որ-  
քան հրամանատարներ են փոխա-  
րինել միմյանց, այստեղ մարտական  
առաջին մկրտությունը ստացել,  
թրծվել, դարձել կայացած զինվո-  
րականներ։ Սա է օրվա խորհուրդը։  
Երկրորդն այն է, որ Ուսասատանի  
Դաշնությունն իր սահմանապահ  
զորքերի ուժերով պետական սահ-  
մանի երկայնքով պահպանում է  
կարդ ու կանոն։ Ծնորհակալություն  
են հայտնում Ուսասատանի Դաշնու-  
թյան սահմանապահ զորքերին՝ մեզ  
աջակցելու, մեր հայրենիքը մեզ հետ  
միասին պահպանելու համար։ Ես  
նաեւ բարձրացա դիրքեր, որտեղ  
հայոց ազգային բանակի զինվոր-  
ները 2800 մետր բարձրության վրա  
ծառայություն են իրականացնում։  
Մեկ տարի առաջ չորրորդ բանակա-  
յին կորպուսի հրամանատարն էի Եւ  
հաճախակի էի լինում այդտեղ։ Եվ  
այժմ հաճելի է տեսնել, թե ինժենե-  
րատեխնիկական ինչ աշխատանք-  
ներ են կատարվել բարձրադիր այդ

Ղիրեբը ում»:  
Տննակատարության նասնակիցների համար զորանասի ինքնագործունեության խմբերը եւ անհատ կատարողները տվեցին համերգ, ցուցադրվեց տեսահոլովակ՝ սահմանապահ ջոկատի առօրյայի նասին պատմող, Էլրանից մեղրեցի սահմանապահներին բարենադրանքների խոսքը հղեց սահմանապահ ջոկատի նախկին հրամանատար, զննացետ Անդրեյ Կորչանովը: Դամերգի ավարտից հետո հրամանատար Ալեքսանդր Բուրչտինը երախտագիտություն հայտնեց համերգի կազմակերպիչներին՝ ներկաներին տոնական տրամադրություն պարգևելու համար: Վերջում տոնակատարության մասնակիցները զորանասի շարային հրապարակում ծանոթացան սահմանապահների գեներերին եւ նարտական տեխնիկային:

# **ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲՈՒՐՇՏԻՆ.**

## **«Սահմանապահ Չոկապի Վեպերանները մեր ուկե ֆոնդն են»**

«Սյունյաց Երկիր» մարզային թերթի հարցերին  
պատասխանում է ՌԴ սահմանապահ զորքերի  
Մեղրու ջոկատի հրամանատար, գնդապետ  
Ալեքսանդր Վայերեւիչ Բոլորշտինը

թի համար: Կարծում եմ՝ զանգվածային լրատվամիջոցներում ասհմանապահ ջոկատի կողմից պետական սահմանի պահպանության օրինակությունը դրականը է կանդադառնա Մեղրի հանայքի դեկավարության, բնակչության, սահմանապահ ջոկատի գինվորականության փոխարաբերությունների վրա:

Մեղրու սահմանապահ ջոկա-  
տի պատմությունը սկիզբ է առնում  
1926 թվականից, երբ Մեղրու գավա-  
ռի՝ պետական սահմանի հատվածը  
պահպանելու համար Նախչենանի  
եւ Զարբարիլի սահմանապահ ջո-  
կատներից ձեւավորվեց սահմա-  
նապահ զորամաս, որն անվանվեց  
Մեղրու առանձին սահմանապահ  
պարետատուն, պարես Շանակվեց  
Գրիգորի Խայապովը:

Հայրենական մեծ պատերազմի  
տարիներին Մելոյոն պարետատան  
սահմանապահները հաջողությամբ  
իրականացրին իրանական հենա-  
կետերի չեղոքացնան օպերացիան,  
որի ընթացքում զոհվեց 12 սահմա-  
նապահ:

1955 թվականին ԽՄՀՍ Աերքին գործելի ճախսարարության հրամանով պետական սահմանը պահպանելու նպատակով ստեղծվեց Մեղրու սահմանապահ ջոկատը, որը ստանձնեց 127 կիլոմետր երկարությամբ պետական սահմանի պապանությունը, իսկ հունիսի 10-ը սահմանվեց որպես սահմանապահ գորամասի կազմավորման օր:

կողմանը պահպանում է:

— Կարո՞ղ եք մի քանի կոնկ-  
րետ փաստերով, ցուցանիշներով  
ասել, թե որքանով է արդյունա-  
վետ մարսանենգության դեմ պայ-  
քարը՝ Ձեր զորամասին վստահ-  
ված տեղամասում:

ասենք բարդ աշխատաք և ու մեծ պատասխանատվություն է: Խոսենք թվերի լեզվով:

2016 թվականին պետական սահմանի վեց խախտող է բռնվել, 2017 թվականին՝ 4-ը: Անցած տարի սահմանային ռեժիմը խախտել է երկու հոգի, այս տարի նման դեպք

չի արձանագրվել: 2016-ին բռնագրավել է 45 միավոր սառը զենք, այս տարի՝ 12 միավոր: 2016-ին առօրաված է 324 860 ռուբլու մաքսանենգ ապրանք, 2017-ին՝ 280 000 ռուբլու, թրամադրողներ՝ անցած տարի 4.7 կիլոդրամ, այս





